

## ՀՈՍ ՄԵՐ ՏԵՂԸ ՉԷՐ



Այդ ամառ տիկնոջս հետ արձակուրդի գացած էի Փարիզ: Մարտո Գօգորեանը մանկութեան բաեկամներես էր , որ քաղաքացիական պատերազմին սկիզբէն վերջնականապէս Փարիզ հաստատուած էր իր եւ այլեւս ֆրանսահայ գաղութին մաս կը կազմէր, մանաւանդ որ կինը ֆրանսացի էր արդէն:

Տիկիններուն առաջարկեցի որ Փարիզի լաւագոյն ճաշարանը ընտրեն եւ ես պատրաստ էի հրաւիրելու վիրենք: Չոյզ մըն ալ աւելցաւ եւ եղանք երեք զոյգ: Տիկինները իրարու հետ խորհրդակցելէ ետք քիչ մը ամչնալով մօտեցան ինձի եւ ըսին թէ Փարիզի ամենակարեւոր ճաշարանը Tour D'Argent էր բայց...:

Տիկիններուն քիչ մը կասկածով ճաշարանին անունը յիշելնուն պատճառը, անոր հոշակն էր մանաւանդ սղութեան մէջ: «Կարելոր չէ», ըսի գինը, եւ երեկոյեան մեր լաւագոյն զգեստները հագուած ճաշարան ուղղուեցանք:

Դրան սեմին յայտնի էր որ սխալ տեղ եկած էինք երբ ականատես եղանք ներս մտնողներուն, որոնք շքեղ ինքնաշարժներով, անձնական վարորդներով եւ յատուկ ընկերակցութիւններով, ինքնաշարժներէն դուրս կուգային՝ ամէն մէկ կին կարծես հարս մը հագուած ըլլար: Դռնապանները ներս կ'առաջնորդէին զանոնք, մինչ անոնք իրենց գունագեղ եւ պերճատեսք փէշերը քաշելով գետնի հաստ գորգին վրայ հաստատ քայլերով ներս կ'ուղղուէին:

Որոշումը, որոշում էր եւ մենք ալ մեր նախապէս ապահոված սեղանը գտանք: Ներսը հսկայ էր եւ շքեղ իր հին վարդարանքով եւ տեսքով: Սեղանները լեցուն էին եւ բոլորն ալ նախապէս ապահովուած: Պալատական երաժշտութիւնը մեղմօրէն կը սփռուէր ճաշարանին բոլոր ոլորտներուն մէջ: Վերջապէս սպասեակը մօտեցաւ եւ ճաշերու ցուցակը երեկարեց մեր բոլորին: Ճաշացուցակը ճոխ էր եւ զայն կարդալը ժամանակի կը կարօտէր: Իսկ հոն ներկայացուած ճաշերու տեսակները հասկնալը տարբեր տեսակի վարպետութեան կը կարօտէր եւ մասնագիտութիւն կը պահանջէր:

Պէտք ունէին սպասեակին օգնութեան, որ ամենայն սիրով բացատրեց մեզի քանի մը ճաշերու մասին յատուկ խոհանոցային բառամթերքով մը, որ անձանօթ էր մեզի: Այրերս ոչմէկ բան հասկցանք,բայց կիները աւելի ընդունակ էին կարծես ճաշերու բաղադրութիւններու գիտելիքներով: Վերջապէս սպասեակինք մեր նախընտրած ճաշերը եւ երկար սպասեցինք մինչեւ որ գլխաւոր պնակը հասաւ սեղան:

Ամէնքս յուսախափ էինք բողոքելու աստիճան: Պնակին մէջի զգուշօրէն ղեկավարուած ճաշի մասերը լիբանանցի ճանճ մը իսկ չէին կշտացներ: Լեզուի մէկ հպումով մը մաքրելէ ետք պնակները գլխաւոր սպասեակին բողոքեցի ըսելով թէ իսկապէս այս ճաշը ակռայի խոռոչ լեցնող քանակ ունէր: Ան զարմացաւ, բայց հասկցուց որ հոս փոր լեցնելու տեղ չէր ալ համտեսելու:

Մեր դժգոհութիւն բազմապատկուեցաւ երբ կաշեկազմ մեծ տետրակի մը մէջ ղեկավարուած կարծես կոնդակ մը ըլլար՝ հաշուեցոյցը ներկացացուեցաւ: Անձի գլուխ մօտ 800 Ամերիկեան տոլար:

Սոված դուրս եկանք ճաշարանէն: Հոս մեր տեղը չէր: Տիկինները առաջարկեցին լիբանանեան Նուրա ճաշարանը: Հարցուցինք թէ ի՞նչ կար մենուին վրայ: Մարդը սկսաւ հաշուել 20 տեսակ լիբանանեան մեկան եւ ետքը խորովածը. հմմոս, մութապպալ, ուրսա արիշ, չի քօֆթէ, արեւելեան սալատ, շէնլիշ, ոչխարի հակիթ, պաստրմա, եւայլն: Ըսի ամեն տեսակէն ալ բեր եւ մի մոռնար շիշ մը գինի եւ շիշ մըն ալ ուիսքին:

Մեծ դաս մը առած, սակայն կուշտ փորով տուն վերադարձանք, լման մոռնալով ցարը որ ստացանք Tour D'Argent ճաշարանին մէջ: